Խաչատուր ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ 1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

(1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականը)

1920թ. հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի ծանր պարտություններից հետո Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին[1]: Հայհեղկոմը խոստանում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցության և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը[2]:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց, այսպես կոչված, ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության անդամները: Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի 1000-ից ավելի սպաներ, որոնց ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ):

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

[2] Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1926, հոկտեմբեր, էջ 101-102:

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները[3]:

Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: Հայրենիքի փրկության կոմիտեն, զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալագյազ ուղղությամբ բռնեցին դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1920-1930-ական թվականներին սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, ի թիվս այլ հարցերի, քննարկեց նաև փետրվարյան ապստամբության պատճառները: Հարկ է նշել, որ հիմնական քննարկումները տեղի են ունեցել դաշնակցական շրջանակներում:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ կարևոր են համարվել Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների կողմից իրականացված անհարկի ձերբակալությունները:

Հայ բոլշևիկներն իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց անմիջապես հետո սկսեցին չհարգել Երևանի համաձայնագիրը: Խորհրդային Հայաստանի Չեկայի (արտակարգ հանձնաժողով, ռուս.-Խ.Ս.) նախագահ Գևորգ Աթաբեկովը նույնիսկ անհեռատես է համարում Բ. Լեգրանի կողմից Դրոյի հետ համաձայնագրի կնքումը՝ ցինիկաբար գրելով, թե այդ պայմանագիրը փաստացի բոլշևիկներին հնարավորություն չի տալիս ձերբակալություններ իրականացնելու[4]:

Տարագիր հայ գործիչ Գարեգին Նժդեհը նշում է, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը բոլշևիկներն արդեն վրեժխնդրություն էին ծրագրում դաշնակցականների հանդեպ, և դեկտեմբերի 2-ի պայմանագիրը ոչինչ չէր նշանակելու իրենց համար: Բոլշևիկյան «Կարմիր Ավանգարդ» թերթն սպառնացել էր «բնաջնջել Դաշնակցական ամբողջ հակայեղափոխությունը»[5]: Այս հրապարակման կապակցությամբ Նժդեհը գրում է. «Ահա այն արնոտ դատավճիռը, որի հաջող գործադրութեան դեպքում հայ ժողովուրդը պիտի գլխատուէր, պիտի մեռներ կուլտուրապէս: «Գլխովին» ոչնչացնել Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ ասել է՝ հայ մտաւորականութեան մեծագոյն մասը և նրա մարտական բոլոր տարրերը»[6]: Գ. Նժդեհն անդրադառնալով բոլշևիկների գործադրած սարսափազդու կոչերին, գտնում է, որ դրանք բխում էին ոչ թե ժողովրդի հանդեպ նրանց ունեցած անկեղծ մտահոգությունից, այլ վերջիններիս քինախնդրության նենգ դրսևորումներ էին: Հակապետական գործունեության համար մի քանի կուսակցական ընկերների սպանության

---

[3] *ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:*
[4] *ՀԱԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 12:*
[5] *«Կարմիր Ավանգարդ», Բաքու, 1920, 30 հոկտեմբերի:*
[6] *Նժդեհ Գ., Ազատ Միտք, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 84:*

դիմաց ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի մտավորականությանը, Գ. Նժդեհի բնութագրմամբ, հրեշություն էր:

Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանն էլ իր հերթին գրում է, որ «Միանգամայն բնական ձևով տերրորի սովորույթը դարձաւ բոլշևիկի երկրորդ բնաւորութիւնը,- սկզբնական շրջանին կրելով մասնակի բնոյթ եւ ուղղուած լինելով միայն որոշ հակառակորդների դէմ, յետագային նա դարձաւ ամենքի դէմ անխտիր»[7]: Հայ բոլշևիկները, հակառակ քաղաքական հետապնդումներ չիրականացնելու իրենց տված խոստմանը, այն դարձրեցին իրենց գործելաոճի պարտադիր բաղադրիչը:

Խորհրդային իշխանությունները նախապես կազմել էին այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է ձերբակալվեին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ժամերին[8]: Ձերբակալությունների հարցում հիմնական դերակատարը Չեկան էր: Դեկտեմբերի 6-ին Չեկան կազմավորվեց և անմիջապես գործի անցավ, ու սկսվեցին ձերբակալությունները[9]: Ըստ Ս. Վրացյանի՝ Չեկայի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, «երան յատկացուեցին Ռոստոմի և Կարճիկեան փողոցի անկիւնում երկու խոշոր շինութիւններ: Չէկայի նախագահութեան համար բռնագրաւուեց Խորհրդարանի փոխ-նախագահ Աւ. Սահակեանի բնակարանը»[10]: Փաստորեն, բոլշևիկները ի սկզբանե էին ծրագրել իրենց կողմից իրականացվելիք բռնագրավումների քաղաքականությունը, որը գործադրվելու էր Չեկայի ձեռամբ:

Աչքի ընկնող ոչ բոլշևիկ գործիչներից առաջինը ձերբակալվում է Հայ ՍԴԿ ԿԿ անդամ Բախշի Իշխանյանը[11]: Ապա բանտարկվեցին խմբապետ Համազասպը, Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը և ուրիշներ: Սակայն բոլորը կարծում էին, որ դրանք մասնավոր դեպքեր կարող էին լինել:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը պնդում է, որ հասարակության վրա առավել ճնշող տպավորություն թողեց Վրաստան անցնելու նպատակով Երևանից հեռացած ղեկավար կուսակցական և պետական գործիչների ձերբակալությունը (Համո Օհանջանյան, Բժ. Հակոբ Տեր-Դավթյան, Արտաշես Չիլինգարյան, Կորյուն Ղազարյան, Վ. Նավասարդյան, Արշալույս Աստվածատրյան եւ ուրիշներ)[12]: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուս մասին ոտքով Երևան բերելը[13]:

---

[7] *Նաւասարդեան Վ., Հ. Ց. Դաշնակցութեան «լիկուիդացիան» (Բոլշեւիզմի սնանկութեան առիթով), Գահիրէ, տպարան «Ցուսաբեր», 1924, 187 էջ:*

[8] *Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 1 (113), էջ 107:*

[9] *Վրացեան Ս., Ինչու եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք» ամսագիր, 1940, փետրուար, էջ 73:*

[10] *Վրացեան Ս., Ցուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, դեկտեմբեր, էջ 69:*

[11] *"Коммунист", Эривань, 1921, 7 декабря.*

[12] *Դաշնակցական գործիչների ձերբակալման հրամանն իրականում ավելի շուտ է եղել: Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալության մասին հրամանը, որքան էլ զարմանալի է, արձակել էր Բ. Լեգրանը Երևանի համաձայնագիրը ստորագրած օրը՝ դեկտեմբերի 2-ին (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 374): Պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի բնորոշմամբ՝ Բ. Լեգրանը ամենակոպիտ*

Արմեն Սեանը[14] գրում է, որ Բախշի Իշխանյանի ձերբակալությունը սկզբում համարվեց օրվա իշխանությունների թուլության և երիտասարդ կոմունիստների չափազանցված եռանդի արդյունք[15]: Սակայն դեկտեմբերի 6-ի ձերբակալությունները եկան ապացուցելու, որ սխալ էր այդպես մտածելը[16]:

Փաստորեն, Հայաստանի բոլշևիկ ղեկավարները երկրում առկա բազմաթիվ անհետաձգելի խնդիրները լուծելու փոխարեն, անմիջապես ձեռնամուխ եղան նախկին կառավարության անդամներին և նրանց համախոհներին ձերբակալելու գործին: Առավել ևս, որ վերջիններս հեռանում էին Հայաստանից և հակապետական ոչինչ չէին ձեռնարկել: Բոլշևիկների կողմից ստորագրված պայմանագիրն իրենց համար որևէ արժեք չուներ:

Սիմոն Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթակա թեկնածուների անուններ՝ Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Ցոլյան, Համազասպ, Բախշի Իշխանյան և ուրիշներ[17]: Փաստորեն, բոլշևիկները ծրագրել էին նաև ձերբակալվածներին սպանել:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը գրում է, որ ձերբակալությունները բոլշևիկներն անհրաժեշտ էին համարում «հակայեղափոխութիւնը» արմատախիլ անելու եւ բոլոր վնասակար տարրերը չեզոքացնելու նպատակով»[18]: Ըստ թերթի՝ այս «հիմնավորումը» ևս դժգոհություն առաջ բերեց ժողովրդի մեջ:

Տարագիր հայ գործիչներն անվերապահորեն պնդում են, որ բոլշևիկների գործողությունների գլխավոր թիրախը Դաշնակցությունն էր: «Ֆիզիքական մահ Դաշնակցութեան»,- այս դարձաւ բոլշեւիկների համար օրուայ կարգախօսը.»,- նշում է Ս. Վրացյանը[19]: Այս առումով ավելի մանրամասն գրում է Իրազեկը: Վերջինիս ներկայացմամբ «հարուածն ուղղուած էր առաւելապէս Դաշնակցութեան ու

կերպով ոտնահարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը, իրեն տերունտօրեն համարում Հայաստանում (տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 39:)

[13] Վրացեան Ս., Ցուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, դեկտեմբեր, էջ 69:

[14] Արմեն Սեանը փետրվարի 18-ի աչքի ընկնող դերակատարներից մեկն է եղել, և «Վէմ»-ում հրապարակված նրա գրությունը դեպքերի ճշգրիտ արձանագրությունն է, որ գրել է դեպքերից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ: Նա փետրվարյան ապստամբությունից հետո հաստատվել է սփյուռքում:

[15] Սեան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 91:

[16] Նոյն տեղում, էջ 92:

[17] Վրացեան Ս., Ցուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 70:

[18] «Հայրենիք» օրաթերթ, 1931, 19 փետրուարի:

[19] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1922, դեկտեմբեր, էջ 53: (Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» վերնագրված այս գրությունը, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրի 1922թ. նոյեմբերի, դեկտեմբերի, 1923թ. հունվարի համարներում, ՀԱԴ Ամերիկայի շրջանի 29-րդ Պատգամավորական ժողովին ներկայացված զեկույց է: 1920-ականների վերջերին և 1930-ականներին «Հայրենիք»-ի համարներում հրատարակվում է Ս.Վրացյանի նույն՝ «Հայաստանի Հանրապետութիւնը» վերնագրով մեծածավալ հուշագրություն-ուսումնասիրությունը, որը հետագայում հրատարակվում է առանձին հատորով):

Դաշնակցականների դէմ, որովհետեւ բոլշեւիկ թշնամին շատ լաւ գիտէր ու հասկանում էր, որ հայութեան վրիժառու բռունցքը, նրա ազգային շահերի արթուն պահակն ու պաշտպան ՀՅ դաշնակցութիւնն էր իր կազմակերպուած հոծ շարքերով եւ մարտական զերազանց կարողութիւններով: Եւ ամենից աւելի տուժեցին ու չարաչար կերպով պատուհասուեցին Դաշնակցութիւնն ու Դաշնակցականները: Դաշնակցականներից քչերը միայն կարողացան դաժան ճակատագրից խուսափել՝ ոմանք հրաշքով երկրից դուրս գալ յաջողելով, ուրիշներ երկրում ապահով թագստոցներում փրկութիւն գտնելով»[20]:

Փետրվարյան ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին գրում է, որ ձերբակալությունները տեղի էին ունենում հակառակ բոլշևիկների տված խոստումների, և դրանով «սկիզբն է դրւում ՀՅ դաշնակցութեան դէմ մի հալածանքի, որն իր վերջին գունատրումներով, մօտենում է Էնվէր-Թալեաթեան սիստեմին»[21]: Փաստորեն, ըստ Կ. Սասունու, բոլշևիկների ցուցաբերած վարքագիծն այնքան դաժան էր, որ այն համեմատում էր երիտթուրքերի գործելակերպի հետ:

Բոլշևիկների կողմից տված խոստումը մերժելու մասին է նշում նաև տարագիր հայ սպա Հակոբ Մարմանդյանը: «Հակառակ իրենց խոստման, երբեք Ցեղկոմի նիստերին չհրաւիրեցին «յեղափոխութեան կողմն անցած ընկերներ» Դրոյին եւ Տէրտէրեանին: Վերջինս շուտով հրաժարական տուաւ եւ հեռացաւ, իսկ Դրօն դեռ շարունակում էր մնալ որպէս Սովետական Հայաստանի կարմիր բանակի հրամանատար: Եւ այդ կարմիր բանակի հրամանատարի աչքի առաջ էր, որ ձերբակալեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանեանին, արդարադատութեան նախարար Ա. Չիլինգարեանին, քաղաքական եւ կուսակցական գործիչներ՝ Վ. Նաւասարդեանին, Մելիք Եոլչեանին, Վ. Բաբայեանին, Համազասպին եւ ուրիշներին»,- արձանագրում է նա[22]:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն անդրադառնում է ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին[23], որն առավել անտանելի դարձրեց իրավիճակը: Առանձնակի դժգոհություն առաջ եկավ, երբ արդարադատության ժողովրդական կոմիսարիատը ցրեց գործող դատարանները և ցանկացած դատերի վարման իրավունքը հանձնեց հեղափոխական տribունալներին[24]: Իսկ առավել զավեշտալին և սադրիչն այն էր, որ հայ բոլշևիկները Խորհրդային Հայաստանի արդարադատության կոմիսար էին նշանակել Սուլեյման Նուրիին[25], որն ինչպես պարզվեց փետրվարյան ապստամբության օրերին քեմալական գործակալ էր[26]:

---

[20] *Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեան Հ.Յ.Դաշնակցութեան (1890-1950), (կազմ.՝ Մ. Վրացեան)», Բոստոն, տպ «Հայրենիք», էջ 309:*

[21] *Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր, էջ 94:*

[22] *Մարմանդեան Ց., Հայ սպաների աքսորը (մի էջ հայ սպայի յուշերից), «Հայրենիք» ամսագիր, 1934, օգոստոս, էջ 102:*

[23] *«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 2 մարտի:*

[24] *«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 5 մարտի:*

[25] *Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 107:*

[26] *Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 131:*

Բոլշևիկների կողմից «հակահեղափոխականների» զանգվածային ձերբակալությունները տեղի ունեցան 1921թ. հունվարին: Հունվարյան բռնությունները պայմանավորված էին նաև հակախորհրդային ելույթների նախապատրաստության մասին իշխանությունների ունեցած կասկածներով[27]: Կ. Մասունու վկայությամբ ձերբակալվածների թիվը հասավ 1900-ի[28]: «Հակայեղափոխական» անվան տակ շուրջ 2000 մարդու ձերբակալության մասին է գրում Աշոտ Թաթուլը: Ընդ որում, բանտարվում էին «անմեղները առանց դասակարգի, տարիքի եւ սեռի խտրութեան»[29]:

Բոլշևիկյան բանտերի սարսափների մասին է գրում 1915թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ բանտում հայտնված Հայկակ Կոսոյանը[30]: Նա Չեկայի և նրա ղեկավար Աթարբեկովի կիրառած բռնությունների մասին այսպես է արտահայտվում. «Գեորգ Աթարբէկովը եկել է Երեւան... Նա վերակազմելու է Չեկան և լծելու է նրան աւելի արմատական ձեւով բոլոր հակայեղափոխականներին, բոլշեւիկեան իրաւակարգին թշնամի եղողներին մաքրագործելու, կամ՝ ինչպէս ընդունուած էր չեկայական բացատրութեամբ՝ դասխոդ անելու: Այս բոլորի համար նպատակահարմար էր քաղաքացիական կռուի ճամբով ընթանալ, հետեւելով Ռուսաստանի մէջ կատարուածին»[31]: Բանտում հայտնված գործչի տպավորությունը թեև ոչ առարկայական կարող է ընկալվել, սակայն նույնպես վկայում է բոլշևիկյան բռնությունների մասին, որոնք համապատասխան դժգոհությունների տեղիք տվեցին:

Բոլշևիկյան բռնությունների մեջ ամենազարհուրելին թերևս մտավորականների ձերբակալությունն էր: Հայ մտավորականությանը չձերբակալելու որոշ խելամիտ հայ բոլշևիկների մոտեցումն ու պայքարը Գ. Աթարբեկովը համարում էր սխոլաստիկ բանավեճ[32]: Նույնիսկ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի նախագահ Սերգո Օրջոնոկիձեն 1921թ. փետրվարի 1-ին Բաքվից Ս. Կասյանի ուղարկված հեռագրում հորդորում է Դաշնակցության դեմ պայքարը չվերածել մտավորականության դեմ պայքարի, թեկուզ, եթե այդ մտավորականները նախկինում դաշնակցական են եղել[33]:

Սակայն, ինչպես բնութագրում է Գ. Նժդեհը, բոլշևիկները գիտակցաբար գնացին հայ մտավորականությանը բարբարոսաբար հալածելու և ոչնչացնելու քայլին: «Խորհրդային իշխանութիւնն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր ամէն մի մտաւորականի «հակայեղափոխական» եւ «խափանարար» հռչակել եւ յանձնել

---

27 Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, էջ 65:

28 Մասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր, էջ 101:

29 Թաթուլ Ա., Փետրուար 18-ի պատմական արժէքը, «Յառաջ» 1929, 21 փետրուարի:

30 Կոսոյեան Հ.,«Բանտի քարերն էին աղաղակում»...(Փետրուարեան ապստամբութեան ընդվզումի 30-րդ տարեդարձի առթիւ,1921-1951),Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1951, 66 էջ:

31 Նույն տեղում, էջ 34:

32 ՀԱԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 13:

33 Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան, Եր., 1999, էջ 17:

Չէկա կոչուած գազանին: Բայց քաջ գիտեր եւ այն, որ անգլուխ և անղեկավար զանգուածներն աւելի հեշտ են կառավարվում»,- գրում է Գ. Նժդեհը[34]:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը հիշատակում է նաև բոլշևիկների կողմից հայ հոգևորականությանը հալածելու մասին: Վերջիններիս արգելեցին դպրոցներում և մշակութային հաստատություններում որևէ պաշտոն զբաղեցնել: Դպրոցներում արգելվեց նաև Հայոց պատմության, գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունը՝ մտածելով, որ դրանք կարող են ապագա սերունդներին մղել ազգայնականության և «հակայեղափոխականութեան»[35]:

Փաստորեն, բոլշևիկյան հեղափոխությունն ավելի հեշտությամբ խորացնելու «մտադրությամբ» խորհրդային իշխանությունները Հայաստանում մտավորականության զանգվածային ահաբեկում իրականացրին: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ այս քայլն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց փետրվարյան ապստամբության հասունացմանը: Ի դեպ, բանտում գտնվող մտավորականության կորստի վախը նույնպես պատճառ էր ապստամբություն բարձրացնելու[36]:

Բոլշևիկյան ձերբակալությունների ալիքը բարձրակետին հասավ 1921թ. փետրվարին: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մեկ այլ գործիչ գրում է, որ ապստամբությունը հասունացավ հատկապես փետրվարի 9-10-ի զանգվածային ձերբակալությունների[37] պատճառով[38]: Չեկան փետրվարի 13-ին նպատակարամար էր համարել ձերբակալել նաև «բոլոր հայտնի մաուզերիստների և դաշնակցականների մոտիկ ազգականներին»[39]: Փաստորեն, ձերբակալությունները սահմանափակելու, ժողովրդական դժգոհությունները մեղմելու փոխարեն, բոլշևիկները ավելի զանգվածային դարձրեցին դրանք: Հատկապես վերջին ձերբակալությունները և դրանց հաջորդած գնդակահարությունները, սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, աներկբայելիորեն հանդիսացան 1921թ. փետրվարյան ապստամբության առիթը:

---

34 Նժդեհ Գ., նշվ. աշխ., էջ 84:

35 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 4 մարտի:

36 Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1927, փետրուար, էջ 46:

37 Փետրվարի 8-ին տեղի ունեցած ձերբակալությունները խորհրդահայ պատմագրության մեջ այսպես են ներկայացվում. «Միայն 1921 թ. փետրվարի 8-ին սկսվում են հակահեղափոխական ուժերի մասսայական ձերբակալությունները: Դրանով Հայկոմկուսի ներքին դասակարգային քաղաքականության մեջ սկսվում է նոր փուլ: Դասակարգային հակառակորդի չեզոքացման, մեկուսացման քաղաքականությունից Հայկոմկուսը անցնում է նրա ոչնչացման քաղաքականությանը» (Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920-1921 թթ.), «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), (ժողովածու)», Եր., 1987, էջ 200):

38 Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1927, փետրուար, էջ 45:

39 ՀԱԱ, ֆ 114, ց. 2, գ. 40, թ. 78: Հմմտ. Սուքիասյան Հ., 1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը,«ՎԷՄ» համահայկական հանդես,2011, թիվ 1,էջ 209:

Ինչպես նշեցինք, փետրվարին բոլշևիկյան իշխանություններն արդեն գնդակահարությունների անցան: Իրազեկը գրում է Հայաստանում գործադրության մեջ մտած մի երևույթի՝ «*ռասխոդի*» մասին, որը բոլշևիկյան տերմինաբանությամբ նշանակում էր Չեկայի կարգադրությամբ սպանել, ոչնչացնել[40]:

Փերվարյան դեպքերի ականատես Զավեն Աշխատունին ապստամբության առիթի մասին խոսելիս անդրադառնում է փետրվարի 18-ին նախորդած օրերին տեղի ունեցած գնդակահարություններին. «Փետրուարի 16-ին առաւօտեան «Օրիանտ» հիւրանոցի մուտքի դրաքը փակցուած էր Չէկայի կողմից Երեւանի բանտում 22 գնդակահարուած բանտարկեալների ցանկը, որի մէջ Չէկան սպառնում էր նաեւ սպանուածների վիճակին ենթարկել այն բոլոր քաղաքացիներին, որոնք կը յանդգնին մասնակցել «հակայեղափոխական» շարժման՝ սովետական իշխանութեան դէմ»[41]: Գնդակահարվածների ցանկի հայտնվելը, բնականաբար ավելի է խորացնում ատելությունը տիրող կացության հանդեպ, և սկսում էին բացահայտ խոսել «ռէժիմի տապալման անհրաժէշտութեան մասին»[42]: Զ. Աշխատունին նաև նկարագրում է, թե ինչպես փետրվարի 18-ի առավոտյան ապստամբները կոտրելով բանտի դռները ներխուժեցին ներս՝«ազատելու Հայաստանի ազատագրութեան գաղափարախօս մտաւորականութիւնն եւ միւս ընկերները, թուով 1700-2100 հոգի»[43]: Բանտում գտնվողների մեծ մասը ծանր հոգեվիճակի մեջ էր հայտնվել: Բոլշևիկյան իշխանությունները նախապես կազմած ծրագրի համաձայն ոչ միայն ձերբակալում էին իրենց քաղաքական հակառակորդներին, այլև բանտերում սկսեցին գնդակահարություններ իրականացնել: Բնականաբար դա ավելի խորացրեց համընդհանուր դժգոհությունը, ժողովրդի համբերության բաժակը լցվեց:

Գնդակահարված և գնդակահարման ենթակա մարդկանց խնդրին անդրադառնում է նաև Արշակ Ալպոյաճյանը: «Ամէն օր նախորդ օրը գնդակահար եղողներու ցանկը կը փակցնէին փողոցները, որպէսզի ժողովուրդը գիտնար և ահաբեկէր:... Պոլշէվիքները ծրագրած էին 600 հոգի մահով պատժել, սակայն իրագործելու ժամանակ չունեցան»,-գրում է սփյուռքահայ ականավոր գործիչը[44]: Փաստորեն, բոլշևիկների վարած ձերբակալությունների և գնդակահարությունների քաղաքականությունը քննադատում էր նաև դաշնակցականներին ոչ համակիր, և խորհրդային իշխանությանը լոյալ տրամադրված հասարակական-քաղաքական գործիչը:

Այսպիսով, 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, աներկ-

---

[40] Իրազեկ Ց., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), Պէյրութ, 1956, տպ. «Համազգայինի», էջ 95:

[41] Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 135:

[42] Նույնը:

[43] Նույնը:

[44] Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ. Թէոդիկ), ԺԶ. Տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1922, էջ 252:

բայորեն առաջնային է համարում բոլշևիկների իրականացրած անհարկի ձերբակալությունները՝ իշխանությունն իրենց փոխանցելու առաջին օրվանից սկսած: Ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հանդեպ հալածանքն ու ձերբակալությունը: Առավել ևս, որ այդ ձերբակալությունները «հիմնավորվում էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Իսկ բանտում հայտնված մտավորական և զինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարություններն այլևս սպասելու տեղ չթողեցին: Փետրվարյան ապստամբությունը, նշված և այլ պատճառներով պայմանավորված, դարձավ անխուսափելի:

БОЛЬШЕВИСТСКИЕ РЕПРЕССИИ КАК ПРИЧИНА ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921г. (оценки общественно-политической мысли армянской диаспоры в 1920-1930гг.)

___ *Резюме* ___ ___ *Х. Степанян* ___

В 1920-1930 гг. общественно-политическая мысль армянской диаспоры в причинах февральского восстания 1921 г. считает приоритетным чрезмерные аресты большевиков. Народ особенно тяжело принимал преследование по отношению к интеллигенции. Аресты «мотивировались» необходимостью устранения из арены, так называемых, «антиреволюционных» элементов. Выстрелы и рубки топором интеллигенции и военных деятелей в тюрьмах не оставляли смысла более ждать. По этим и другим причинам февральское восстание стало неизбежной.

Տեղեկություններ հեղինակի մասին
Ստեփանյան Խաչատուր Ռոստոմի - պ. գ. թ., դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, E-mail: kh.stepanyan@gmail.com, kh.stepanyan@rambler.ru